ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, ՊՐՈՖԵՍՈՐ ՄԻՔԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ

8-ը դեկտեմբերի, 2023թ.

Կարծիք

Արա Սմբատի Զարգարյանի «Նախատիպի գեղարվեստականացման սկզբունքները Եղիշե Չարենցի պոեզիայում» ներկայացված ժ.01.04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Եղիշե Չարենցի ստեղծագործությունները գրողի կենդանության օրոք և նրա մահվանից հետո գտնվել են գրականագիտական մտքի ուշադրության կենտրոնում: Սկսած 1920-ական թթ. մինչև մեր օրերը բազմաթիվ ուսումնասիրություններ, ատենախոսություններ ու հոդվածներ են գրվել: Եղիշե Չարենցի գրական ժառանգությունը քննվել է ամենատարբեր տեսանկյուններից: Արա Զարգարյանի ուսումնասիրությունը արդիական է, քանի որ չարենցյան նախատիպերի գեղարվեստականացման սկզբունքների մասին գրված առանձին աշխատություն չկա:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության մեջ հեղինակը փորձել է նոր ժամանակներում նորովի քննել Ե. Չարենցի պոետիկայի հարցեր, մի շարք նախատիպեր ուսումնասիրել նոր ընթերցմամբ ու գրականագիտական նոր գործիքակազմով:

Ատենախոսության մեթոդաբանությունը հիմնված է Մ. Ալտմանի, Մ. Անդրոնիկովի, Ռ. Շտայների և այլ գիտնականների տեսությունների վրա:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (իրենց ենթագլուխներով), եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ուսումնասիրության տեքստը շարադրված է 158 էջի վրա, ներառյալ՝ օգտագործված գրականության ցանկը:

Ներածությունում կարևորվել են թեմայի արդիականությունը և գիտական նորույթը, ներկայացվել է ուսումնասիրվածության աստիճանը, ձևակերպվել են նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանությունը, տեսա-գործնական նշանակությունը և կառուցվածքը:

Առաջին գլխում («Աստվածաշնչյան պատգամի սինթեզը Կոմիտասին»), որը ներառում է երկու ենթագլուխ, քննվում են Կոմիտասի մասին մի շարք գործեր, հատկապես «Կոմիտաս» և «Requiem Aeternam Կոմիտասի հիշատակին» ստեղծագործությունները: Վարդապետը զուգահեռվում է աստվածայինի, հատկապես Քրիստոսի հետ, ինչը պայմանավորում է գեղարվեստականացման սկզբունքի յուրահատկությունը, Կոմիտասի նախատիպի չարենցյան ընկալումը:

Երկրորդ գլուխը («Միֆը, առասպելը և միստերիան՝ նախատիպի ընթերցման սկզբնակետ») բաղկացած է հինգ ենթագլուխներից, որոնցում դիտարկվել են քաղաքական գործիչների կերպարները, որոնք զուգահեռվում են միֆական հերոսներին:

Երրորդ գլխուխը («Կինը՝ երկու աշխարհների անցումային կետ») բաղկացած է երեք ենթագլուխներից: Ա. Զարգարյանը քննում է «կանանց նախատիպերը», որոնք Չարենցի կյանքի բարդ իրավիճակների ուղեկիցներն էին: Գեղարվեստականացման սկզբունքի հիմքում կանգնած է կինը չարենցյան ընկալումներով: Ատենախոսը Արուս Ոսկանյան-Մագդա-Արփենիկ նախատիպերը քննելիս ներկայացնում է գեղարվեստականացման սկզբունքների բազմաշերտությունը, կարևորում արխետիպային և աստվածաշնչյան զուգահեռները:

Եզրակացություններ բաժնում ներկայացվել են ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Ատենախոսության թեմայով հրատարակվել է 6 հոդված:

Ա. Զարգարյանի ատենանախոսությունը աչքի է ընկնում հմտորեն կատարած գրականագիտական վերլուծությամբ: Ատենախոսն իր ուսումնասիրության արդյունքներով հաստատում է հասուն գիտական գործունեություն ծավալելու ունակություն, կոնկրետ փաստերի, տվյալների ու սկզբնաղբյուրների հետ աշխատելու կարողություն, մեծածավալ գրականության մանրակրկիտ վերլուծության հմտություն:

Նշենք մի քանի դիտարկումներ.

1. ատենախոսությունում և սեղմագրում կան տեխնիկական թերություններ և վրիպակներ (*տես. էջ 14, 18, 53, 57, 60,65, 70, 71, 86 և այլն*): Սեղմագրի ռուսերեն և հայերեն թարգմանությունները ճշգրտման կարիք ունեն;

2. Արուս Ոսկանյանի Մելպոմենեի հետ համեմատության կապակցությամբ ատենախոսը գրում է «Չարենցը շարժվում է Ալեքսանդր Պուշկինի «Եվգենի Օնեգին» ստեղծագործությունում առկա Մելպոմենեի հղման բանաձևով» (*էջ 133*): Այս հատվածը պահանջում է բացատրություն: Պուշկինի «Եվգենի Օնեգին» վեպում (գլուխ 7, տուն L) նկարագրվում է թատրոնը, որտեղ Մելպոմենեի կողքին հիշատակվում են այլ մուսաներ (Թալիա, Տերփսիքորա և այլն):

Սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Կարող ենք ասել, որ Ա. Զարգարյանի «Նախատիպի գեղարվեստականացման սկզբունքները Եղիշե Չարենցի պոեզիայում» ատենախոսությունը լուրջ գիտական աշխատանք է, որը կարող է օգտակար լինել գրականագետների համար:

Կարծում ենք, որ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջները:

Ատենախոս Արա Սմբատի Զարգարյանը արժանի է Ժ.01.04.- «Գրականության տեսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ատենախոսությունը քննարկվել է և վերջինիս վերաբերյալ եզրակացությունը հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Արտասահմանյան գրականության ամբիոնի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 8 նիստում՝ բ.գ.դ, պրոֆեսոր Ռ. Թադևոսյանի, բ.գ.թ., դոցենտ Մ.Գիլավյանի, բ.գ.թ., դոցենտ Ի. Սարկիսյանի, բ.գ.թ., դոցենտ Կ. Խանյանի, բ.գ.թ., դոցենտ Ք.Բեջանյանի, բ.գ.թ., դոցենտ Ա.Ամիրխանյանի, բ.գ.թ., պրոֆ.պ. Ս. Նուրալովայի մասնակցությամբ:

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ

բ.գ.դ., պրոֆեսոր ՌՈՒԶԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ռուզան Թադևոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ գիտական քարտուղար, մ. գ. թ., դոցենտ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ

8-ը դեկտեմբերի, 2023թ.